



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ԿՅԱՆՔՍ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ, ՀՈԳԻՍ՝ ԱՍՏՈՌԻՆ, ՊԱՏԻՎՍ՝ ԻՆՁ

Թիվ 8(15), 25 դեկտեմբերի, 2018թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

Կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժինը պարբերաբար կազմակերպում է տարբեր գիտական միջոցառումներ, ինչը նպաստակ է հետապնդում ստեղծել մի միջավայր, որտեղ կարելի է բարձրաձայնել տվյալ ժամանակահատվածի արդիական խնդիրները, կազմակերպել քննարկումներ գիտական որոշակի հարցերի շուրջ: Շարունակելով ավանդույթը՝ սույն թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրում կազմակերպվեց «Իրավունքի չարաշահման հիմնահարցերը» թեմայով գիտական սեմինար:

Սեմինարը վարելու համար իրավիրավել էր Երևան քաղաքի ընդհանուր իրավասուության առաջին ատյանի դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Գոռ Թորոսյանը:

Տես՝ էջ 2

«ՑԱՆԿԱՅԱԾ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՍ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՍՈՎՈՐՈՂԸ ՊԵՏՔ Է ԱՐԺԵՎՈՐԻ»

-Ուսանողի հետ պատրաստ եմ միշտ քննարկել ցանկացած նոր գաղափար,- նշեց կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Ս. Բաբայանը 2018թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի նիստում:



Ուսանողական խորհրդի նիստում քննարկվեցին զանազան հարցեր, որոնցից մեկը կապված էր իրավաբանական գիտությունների ոլորտում իրականացվող աշխատանքների հետ: Ս. Բաբայանը նշեց, որ ոստիկանության գեներալ-մայոր Ս. Բաբայանը 2018թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի նիստում:

Ուսանողական խորհրդի նիստում քննարկվեցին զանազան հարցեր, որոնցից մեկը կապված էր իրավաբանական գիտությունների ոլորտում իրականացվող աշխատանքների հետ: Ս. Բաբայանը նշեց, որ ոստիկանության գեներալ-մայոր Ս. Բաբայանը 2018թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի նիստում:

Ս. Բաբայանը նշեց, որ ոստիկանության գեներալ-մայոր Ս. Բաբայանը 2018թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի նիստում:

Ս. Բաբայանը նշեց, որ ոստիկանության գեներալ-մայոր Ս. Բաբայանը 2018թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի նիստում:

Ս. Բաբայանը նշեց, որ ոստիկանության գեներալ-մայոր Ս. Բաբայանը 2018թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի նիստում:

կալավորության որոշումները որքանով են նպաստավոր ուսանողի համար: Ցանկացած որոշում կամ գործառնություն պետք է սովորողն արժեքի: Դուք ոչ միայն խնդիրները բարձրաձայնողներն եք, այլև առավել թարմ գաղափարներով, առաջարկություններով մեզ օժանդակողները,- ընդգծեց Ս. Բաբայանը՝ կարևորելով նաև այն հմտությունները, որոնք սովորողները ձեռք են բերում՝ անդամակցելով ուսանողական խորհրդին:

Նա նաև ուսանողական խորհրդի ներկայացուցիչներին հետ քննարկեց մի շարք հարցեր, որոնք առնչվում են ուսանողական խորհրդին անդամակցելուն, ուսանողներին հուզող մի շարք կազմակերպչական, կարգապահական և տարատեսակ այլ խնդիրներին: Ուսանողները հարցեր առաջադրեցին ոստիկանության տարածքային բաժիններում պրակտիկա անցնելու, տարբեր հաստատություններ ծանաչողական այցեր կատարելու, նոր գործարանային մշակույթ ձևավորելու ու դասավանդման մեթոդների վերաբերյալ:

Սեմինարը անցավ խորհրդի նիստում՝ ներկայացվեցին հարցեր, որոնք առնչվում են ուսանողական խորհրդին անդամակցելուն, ուսանողներին հուզող մի շարք կազմակերպչական, կարգապահական և տարատեսակ այլ խնդիրներին: Ուսանողները հարցեր առաջադրեցին ոստիկանության տարածքային բաժիններում պրակտիկա անցնելու, տարբեր հաստատություններ ծանաչողական այցեր կատարելու, նոր գործարանային մշակույթ ձևավորելու ու դասավանդման մեթոդների վերաբերյալ:

Ս. Բաբայանը նշեց, որ ոստիկանության գեներալ-մայոր Ս. Բաբայանը 2018թ. նոյեմբերի 14-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի ուսանողական խորհրդի նիստում:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ - ԶՆՆԱՐԿՈՒՄ



2018թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրում կազմակերպվել էր «Համայնքային խորհուրդները» որպես ոստիկանության հասարակություն կապի ամրապնդման ինստիտուցիոնալ երաշխիք» խորագրով կլոր սեղան-քննարկում: Քննարկմանը մասնակցում էին ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Ս. Բաբայանը, կրթահամալիրի ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, մագիստրատուրայի սովորողները, ինչպես նաև ՀՀ Ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարածքային առանձին բաժինների համայնքային ոստիկանության բաժանմունքի պետերը: Միջոցառմանը կազմակերպել էր կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնը:

Միջոցառման ընթացքում գիտագործնական զեկույցներով հանդես եկան վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Վ. Ավագիմյանը և ՀՀ Ոստիկանության ՀԿՎ վարչու-

թյան պրոֆիլակտիկայի բաժնի պետ, ոստիկանության կապիտան Գ. Խաչատրյանը: Վ. Ավագիմյանը համակողմանիորեն անդրադարձավ համայնքային խորհուրդների ձևավորման և աշխատանքների կազմակերպման հիմնախնդիրներին, իսկ Գ. Խաչատրյանը, ամփոփելով ոստիկանության գործունեությունը քննարկվող ոլորտում, անդրադարձավ համայնքային խորհուրդների կազմում քաղաքացիներին ներգրավելու և դրանց աշխատանքները կազմակերպելու առաձեռնահատկություններին: Ձեկույցների ավարտից հետո կազմակերպվեց քննարկման մասնակիցների մտքերի փոխանակում, որի ընթացքում համեմատական վերլուծության ենթարկվեց ոլորտի միջազգային փորձը, ուղենշվեցին առանցքային հիմնախնդիրները և հնչեցին դրանց լուծմանը միտված առաջարկություններ: Վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Բաբայանյանը շեշտեց համայնքային խորհուրդների դերը հատկապես ոստիկանություն-հասարակություն հարաբերությունների բարելավման, փոխադարձ վստահության մթնոլորտի ձևավորման, ոստիկանության գործունեության թափանցիկությանը և հաշվետվողականությանը նպաստելու համատեքստում:

Հանդիպման ավարտին միջոցառմանը հրավիրված ոստիկանության ծառայողները հույս հայտնեցին, որ մասն համդիպում-քննարկումները կլինեն շարունակական, քանի որ դա կնպաստի տեսության և պրակտիկայի ինտեգրմանը, պրակտիկայի վրա հիմնված գիտական մոտեցումների մշակմանը և ներդրմանը՝ ապահովելով ոստիկանություն-հասարակություն գործընկերային արդյունավետ հարաբերություններ:

Ազատ Բաբայանյան
Վարչական իրավունքի և ոստիկանական
վարչական գործունեության ամբիոնի պետ,
ոստիկանության փոխգնդապետ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱ

Առհասարակ մարդն ունենում է ոչ միայն առողջության վերականգնման, այլև հաճախ նաև իրավաբանական կոմֆլիկտի լուծման կարիք: Ընդամենը նա կարող է բախվել այն խնդրին, թե որտեղ և ում կարող է դիմել իրավաբանական խորհրդատվություն ստանալու և իր կորսված իրավունքներն օրենքին համապատասխան վերագտնելու համար: Ուստի անհրաժեշտություն է առաջանում ստեղծել մի այնպիսի կլինիկա, որտեղ յուրաքանչյուր դիմող կարող է գտնել իր հարցի պատասխանը, որը կառնչվի իրավունքի տարբեր ճյուղերին:

Իրավաբանական կլինիկաների ձևավորման գաղափարը նոր չէ: Այն առաջացել է դեռևս 20-րդ դարասկզբին ԱՄՆ-ում, հետագայում ծավալվել է Եվրոպայում: Նշենք, որ ՌԴ-ում առաջին իրավաբանական կլինիկան գործել է 1995 թ., իսկ Հայաստանում՝ 1999թ. (ԵԴՀ-ում):

Հաշվի առնելով իրավաբանական կլինիկայի առաքելության կարևորությունը՝ ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Ս. Բաբայանի հրամանով 2018 թվականին ստեղծվել է ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի իրավաբանական կլինիկա, հաստատվել է նաև կլինիկայի կառուցվածքը, գործունեության կազմակերպումը, սովորողների ընդգրկումն ու ուսուցումը, համախորհրդի ընդունելության կարգը, կլինիկայի աշխատանքների գնահատումը, համագործակցությունը և այլն: Կառուցողության համաձայն՝ սովորողներն ընտրվում են ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի իրավագիտության ֆակուլտետի 3-րդ, 4-րդ կուրսերի բարձր առաջադիմությամբ սովորողներից՝ հարցազրույցի արդյունքների հիման վրա: Ներկայումս կլինիկայի աշխատանքներին ընդգրկվելու համար հարցազրույց անցել է 22 սովորող: Սովորողներն իրավաբանական խորհրդատվություն ստանալու համար կանցնեն հատուկ դասընթացներ, ավարտից հետո կստանան համապատասխան հավաստագիր:

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի իրավաբան-

ական կլինիկայում իրավագիտության ֆակուլտետի բարձր կուրսերի սովորողներն իրենց ուսումնական ընթացքում ստացած տեսական գիտելիքների հիման վրա անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրելու կլինիկա դիմած անձանց քրեաիրավական և քաղաքացիաիրավական ոլորտներով: Սա իրապես մի յուրօրինակ քննություն է, որտեղ ապագա իրավաբանը ներկայացնում է իր գիտելիքները գործնականում կիրառելու, քաղաքացիների հետ հաղորդակցվելու, իրավաբանական աջակցություն ցուցաբերելու, համապատասխան փաստաթղթեր կազմելու, ինչպես նաև դիմողի իրավագիտակցության բարձրացմանը միտված հմտությունները: Հարկ է նշել, որ խորհրդատվության հարցում սովորողին աջակցում է ղեկավարը՝ դասախոս-կոորդինատորը, սակայն վերջինս միջամտություն չի ունենում սովորող-հաճախորդ շփմանը, այլ՝ հեռավոր վերահսկում է գործի համաձայնեցմանը, կազմած փաստաթղթերը:

Իհարկե, դյուրին չէ ամբողջ գործընթացը, քանի որ սովորողը վերացական օրինակից անցնում է կատարելու մարմնավորված և շոշափելի օրինակի՝ իր առջև խնդիր դնելով կոնկրետ սուբյեկտին՝ իրանց՝ կոնկրետ իրավաբանական լուծումներ: Սա սովորողի իրավաբան կայանալու ուղիներից մեկն է:

Նկատենք, որ կլինիկայի գործունեության շահավետությունը բազմակի կապված է սովորողը ձեռք է բերում համապատասխան մասնագիտական հմտություններ, համախորհրդ ստանում է ճիշտ, գրագետ, անվճար խորհրդատվություն, դասախոսը հարստացնում է դասավանդվող նյութը, կրթահամալիրն այս աշխատանքի հանրագումարում մասնակցում է տարաբնույթ իրավական հարցերի լուծմանը, իրականացնում է իրականացվող քաղաքացիական, ունենում է սոցիալական դերակատարում, որն էլ իր հերթին ընդգծում է բոլոր առաքելությունը և հեղինակությունը:

Արմինե Մելիքսեյան
Քրեական իրավունքի և քրեաբանության
ամբիոնի դոցենտ,
ոստիկանության փոխգնդապետ



ԱՎԱԳ ԴՊՐՈՅԻ ՍԱՆԵՐԸ՝ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐՈՒՄ



Եղվարդի թիվ 1 ավագ դպրոցի սաների համար 2018 թվականի նոյեմբերի 13-ը տարբերվում էր կրթական առօրյայից: Նրանք հյուրընկալվել էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում, ուր այցելեցին մարզասրահ, ակումբ, հրաձգարան, ականատես եղան նաև, թե ինչպես է կրթահամալիրում անցկացվում կրակային պատրաստականության դասը:

Դպրոցականների մեջ առանձնակի հետաքրքրություն առաջացրեց Սուրբ Վարդան մատուռը, որտեղ մոմեր վառելով՝ ուխտեցին հայրենիքին

նվիրված քաղաքացիներ դառնալ:

Այնուհետև կրթահամալիրի պատմության թանգարանում առաջատար մասնագետ Դ. Հովսեփյանը նրանց ծանոթացրեց ոստիկանության և կրթահամալիրի պատմությանը:

Ձրոնելով կրթահամալիրի տարածքով՝ ավագ դպրոցի սաներին հետաքրքրեցին Պ. Սևակի, Ե. Չարենցի, ինչպես նաև Ա. Հեքիմյանի հիշատակը հավերժացնող հուշարձանները, որոնց մասին ներկայացրեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության ուսումնական

գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության մայոր Տ. Թևոսյանը՝ պատմելով հայ համաճարների գրական և երաժշտական գործունեության մասին:

Ճանաչողական այցի ավարտին դպրոցականները մի շարք հարցեր հղեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիր ընդունվելու կարգի ու պայմանների վերաբերյալ, որոնց սպառնիչ պատասխաններ տվեց ոստիկանության մայոր Տ. Թևոսյանը՝ հույս հայտնելով, որ ապագայում նրանք կհամալրեն կրթահամալիրի սովորողների շարքերը:

«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ»

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

2018 թվականի նոյեմբերին լույս տեսավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի 6-րդ համարը: Ամսագրում պարբերաբար ընդգրկվում են կրթահամալիրում կայացած գիտական միջոցառումների նյութերը, և այս համարը նույնպես բացառություն չէր: 2018 թվականի հունիսին Հայաստանի Հանրապետության ոստիկանության 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում տեղի ունեցավ «Ոստիկանության տեղը և դերը պետական կառավարման համակարգում» թեմայով հերթական միջազգային գիտագործնական համաժողովը, որին մասնակցեց Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության շուրջ 9 ոստիկանական ուսումնական հաստատությունների 15 ներկայացուցիչ:

Գիտաժողովի ընթացքում ներկայացված զեկույցներից արդիականությամբ առավել աչքի ընկնողներն ընդգրկվել են ամսագրի սույն համարում:



ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ



Սկիզբը՝ էջ 1

Սեմինարի ընթացքում ներկայացվեցին իրավունքի չարաշահման տարբեր ոլորտների առանձնահատկությունները, գործող արևելասկան և իրավունքի չարաշահման հակազդման որոշ մեխանիզմներ: «Իրավաբանական գրականությունում և տեսությունում չկա միատեսակ մոտեցում այն մասին, թե ինչ է «Իրավունքի չարաշահումը»:

Իրավունքի չարաշահման ընկալումը տարբեր է՝ կախված յուրաքանչյուր երկրում առկա հասարակական, իրավական, սոցիալական արժեքներից և ընկալումներից, այն տարբեր կերպ է ընկալվում մայրցամաքային իրավունքի և ընդհանուր իրավունքի երկրներում: Սակայն իրավունքի չարաշահումն իր արտահայտումն ունի ոչ միայն քաղաքացիական իրավունքում, այլ նաև իրավունքի այլ ճյուղերում, - նշեց բանախոսը:

Միջոցառմանը ներկա էին կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, թեմայով հետաքրքրվող ծառայողներ և սովորողներ, որոնք սեմինարի ընթացքում հարց ու պատասխանի միջոցով հանգամանորեն ծանոթացան թեմայի մանրամասներին, և իրականացվեցին բուռն քննարկումներ:

Իրավունքի չարաշահումը սերտորեն առնչվում է իրավաբանական այլ երևույթներին և հասկացություններին: Հետևաբար իրավունքի չարաշահման ամբողջական ելույթում պահանջում է նաև այլ հասկացությունների հետ հարաբերակցության քննարկում:

Այդպիսիք կարող են լինել իրավունքի չարաշահում և իրավախախտում, իրավունքի չարաշահում, բարեխղճություն և ողջամտություն հասկացությունների հարաբերակցությունը:

Գ. Թորոսյանը հանգամանորեն անդրադարձավ նաև իրավունքի չարաշահման արգելքի սահմանմանը:

Նա մասնավորապես նշեց.

- Իրավունքի չարաշահման անթույլատրելիության հիմնական նշանակությունն այն է, որ անձանց կոնկրետ գործողություններին արձագանք տրվի այն դեպքում, երբ պարզվի, որ նրանք խախտում են հանրային կամ մասնավոր օրինական շահերը, որոնք օրենքով ուղղակիորեն արգելված չեն: Նշված սկզբունքը թույլ է տալիս իրավակիրառ կամ իրավամեկնաբանողական ակտերի միջոցով հաստատել այդպիսի գործողությունների անօրինականությունը, որը բխում է օրենսդրության ընդհանուր իմաստից:

Նշվածը կապված է նաև այն հանգամանքի հետ, որ ոչ մի հասարակություն չի կարող անձին տալ անսահման ազատություն, քանի որ այն կբերի եսասիրական ինքնակամության, անարխիզմի և անհատական շահերի անվերջ բախման:

Գիտական սեմինարի ավարտին բանախոսը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ. Եսայանի կողմից պարգևատրվեց շնորհակալագրով:

Արտակ Մնացականյան
Գիտական աշխատանքների բաժնի պետ,
ոստիկանության մայոր

ՏՈՆԱԾԱՌ ԶԱՐԴԱՐԵԼՈՒ ԱՎԱՆՈՒՅԹԸ

Տոնածառ զարդարելու ավանդույթը պահպանվել է ամբողջ Հայաստանի տարածքում և հայաբնակ վայրերում, բայց միշտ չէ, որ որպես տոնածառ՝ եղևին է զարդարվել: Օրինակ՝ հին Հայաստանում Ամանորի երեկոյան զարդարում էին ձիթենուց կտրված հաստ ճյուղը և կոչում էին «կաղանդ ծառ», մեկ այլ վայրում ծառ էին պատրաստում ցորենի հասկերի խրձերից: Ընդհանրապես ծառի, բնության պաշտամունքը գոյություն է ունեցել շատ վաղ ժամանակներից և կապվել է հոգու անմահության, կյանքի հավերժության գաղափարին:



Քրիստոնեության շրջանում ծառի պաշտամունքը դրսևորվել է Ծաղկազարդի, խաղողի օրինման և Նոր տարվա տոնածառի արարողությամբ: Այդ շրջանում որոշակի փոփոխությունների է ենթարկվել Ձմեռ պապի խորհուրդը: Դեռևս Բարեկենդանի տոնակատարությունների ժամանակ ընդունված էր դիմակներով հանդես գալու, երեխաներին զվարճացնելու և նվերներ բաժանելու սովորույթը:

Սուրբ Սարգսի տոնից՝ որոշ ժամանակ անց նշվում էր նաև Ս. Պարթևի օրը, որն անվանում էին Մեծ պապուկի տոն: Ընտանեկան խրախմանքների ժամանակ տան մեծն աննկատ դուրս էր գալիս, գլխին դնում «քոլոզ» անվանվող սրածայր գլխարկ, դեմքին բրդեց սարքած բեղ ու մորուք էր կպցնում, մեջքին էլ նվերներով լի մի մեծ տոպրակ էր կրում ու ձեռքին զավազան բռնած՝ ներս էր մտնում: Մեծ պապուկը Ձմեռ պապի նախատիպն էր:

Հին երևանցիների Ամանորի սեղանները լի էին պասային ու տեսների ավանդական տեսականիով՝ աղանձ՝ համեմված ձավարով, կանեփով, քունջութով և չամիչով, պասուց տոլմա, որը պատրաստվում էր սիսեռով, ոսպով, լոթով և չամիչով, ձկնեղեն և այլն, քանի որ տոնը համընկնում էր շաբաթապահի հետ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տոնածառը՝ որպես «գերմանական ավանդույթ», արգելված էր, իսկ 1917 թվականի հեղափոխությունից հետո արգելվեց՝ իբրև «կրոնական վերապրուկ», քանի որ ասոցացվում էր ոչ միայն Նոր տարու, այլև Սուրբ Ծննդի հետ:

Սոցիալիստական մշակույթի կայացման տարիներին Կոմկոմիտեական կուսակցությունը հակակրոնական քարոզարշավ էր ծավալել: Նոր Տարին շարունակում էին նշել դեկտեմբերի 31-ի գիշերը, սակայն առանց տոնածառի և Սուրբ Ծննդյան պապիկի:

Չնայած դրան՝ հավատացյալ մարդիկ շարունակում էին զարդարել տոնածառը Սուրբ Ծննդի առթիվ: Ավագ սերնդի ներկայացուցիչները պատմում են, որ տոնածառը դրվում էր գաղտնի, ամենավերջին սեմյակում:

1930-ականների կեսերից տոնածառն սկսեցին դիտարկել որպես ամանորյա խորհրդանիշ: 1935թ. դեկտեմբերի 28-ին «Պրավդա» թերթը հրապարակեց տոնածառի վերաբերյալ Պավել Պոստիշևի (սովետական կուսակցական գործիչ) նամակը:

Այս նամակից 11 ամիս անց տոնածառի տեղադրումը պաշտոնապես թույլատրվեց և ճանաչվեց որպես ամանորյա տոնախմբությունների անբաժանելի մաս: Այսուհետ տոնածառը պետք է դրվեր ոչ թե Սուրբ Ծննդի, այլ Ամանորի նախօրեին, իսկ տոնածառի զազաթը բեթլեհեմյան ութանկյուն աստղի փոխարեն զարդարում էին կարմիր հնգանկյուն աստղով:

Առաջին մեծ տոնածառը տեղադրվեց Մոսկվայում՝ 1937թ. հունվարի 1-ին:

Երևանում տեղադրված առաջին տոնածառը շատ մեծ չէր, զարդարված էր ոսկեգույն ընկույզներով, իսկ տակը նստած էր խաղալիք արջը: Տոնածառը շրջապատված էր կրպակներով, որտեղ խաղալիքներ էին վաճառում:

Երբ գալիս է Նոր տարին, հանրակրթական դպրոցներում, մանկապարտեզներում, մշակութային պալատներում ու ակումբներում կազմակերպվում են տոնածառի հանդեսներ, որոնց ընթացքում հարյուր հազարավոր երեխաներ ցուցադրում են երգեր, պարեր, արտասանելու իրենց շնորհքը: Ուրախ հանդեսների ժամանակ Ձմեռ պապը շնորհավորում է նրանց Նոր տարին և բաժանում նվերներ՝ գեղեցիկ խաղալիքներ, քաղցրավենիք, մրգեր:

Անի Մեխակյան
կրթության որակի ապահովման բաժանմունքի
առաջատար մասնագետ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՏՈՆՈՒՄ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Տարբեր երկրներում Ամանորը նշվում է յուրովի, նույնիսկ՝ տարբեր օրեր, սակայն տարբեր ազգերին ընդհանրացնում է այն, որ բոլորը Նոր տարին դիմավորում են մոր հույսերով ու սպասելիքներով, ցանկություններ են պահում, նվերներ են տալիս միմյանց, իսկ երեխաները սպասում են Ձմեռ պապին, որին ամեն ժողովուրդ տարբեր անուններով է կոչում:

Ոչ բոլոր երկրներում են տոնի խորհրդանիշերը Ձմեռ պապն ու տոնածառը: Մեծամասնության համար Նոր տարին շամպայնն է, վերջին վայրկյանների հետաշվարկը և ջերմ բարեմաղթանքները:

Շատ երկրներ են պահպանել Ամանորը նշելու ավանդական սովորույթները:

Այսպես՝ Հունաստանում մարդիկ միմյանց տուն գնալիս ճանապարհից մեծ քար են վերց-

նում և գցում տան դռան առաջ՝ ասելով . «Թող տանտիրոջ հարստությունը լինի այս քարի պես ծանր»: Եթե ծանր քար չի լինում, շատ փոքր քար են վերցնում և դռան մոտ վայր գցելիս արտասանում. «Թող տանտիրոջ դժվարություններն այս քարի նման փոքր լինեն»:

Հույն ընտանիքներն ունեն յուրաքանչյուր տոնը խորհրդանշող առանձնահատուկ ուսեստներ: Հունական ամանորյա ամենահայտնի ուսեստը տոլման է, որը խորհրդանշում է Քրիստոսի բարությունը:

Իսպանիայում Նոր տարվա տոնական գիշերը բոլորը շտապում են կենտրոնական հրապարակ՝ մեծ տոնածառի մոտ, որպեսզի աշտարակի ժամացույցի յուրաքանչյուր ղողանջի հետ ուսեն մեկական խաղողահատիկ՝ միաժամանակ ցանկություն պահելով: Ժամացույցի

ղողանջների ընթացքում փորձում են ուսել խաղողի բոլոր 12 հատիկները, քանզի յուրաքանչյուր հատիկը խորհրդանշում է տարվա ամիսը, եթե հասցնում են ուսել բոլորը, ապա դրանով գրեթե «երաշխավորվում» է բաղձալի երազանքի կատարումը: Ի դեպ, այս ավանդույթը տարածվում է նաև նրանց վրա, ովքեր Նոր տարին դիմավորում են տանը: Խաղողի հատիկները դրվում են բոլոր ամանների մեջ:

Իտալիայում Նոր տարին դիմավորում են ամեն տեսակի հնոսիքից ազատվելով: Ուստի և ամանորյա գիշերն ընդունված է պատուհաններից դուրս նետել հին իրերը:

Իտալիայում կա նաև մի այսպիսի ավանդույթ. հունվարի 1-ի առավոտյան պետք է աղբ-յուրից ջուր բերել տուն:

Տես՝ էջ 4





ԱՊՐԵԼ ԱՐԱՐԵԼՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ

Ողբերգական օրից անցել է 30 տարի, երբ Հայաստանի հյուսիսային քաղաքների և գյուղերի հողը կաթվածահար եղավ: Հաշված ռուպենների ընթացքում հանրապետության ծաղկող շրջանները վերածվեցին փլատակների կույտերի: Երբեմնի կապույտ ու ջինջ երկինքը խիտ, սև ամպերով ծածկվեց, փլատակների փոշին երկինք բարձրացավ: Մարդիկ կորցրին կողմնորոշումը, շներն անընդհատ ոռնում էին, իսկ երկնքում ոչ մի թռչուն չէր երևում:

Անհնար է նկարագրել այն վիշտը, որ հայ ժողովրդին հասցրեց ահեղ երկրաշարժը: Կարող ենք արդյոք մոռանալ այն ամենը զոհերի ծայները, որոնք մարեցին իրենց տների, գործարանների, դպրոցների և մանկապարտեզների փլատակների տակ:

1988 թվականի դեկտեմբերի 7-ի անմախաղ երկրաշարժի առաջին ռուպենների քառասուն վիճակն անցնելուց հետո միլիցիան փրկարարական աշխատանքների հետ մեկտեղ սկսեց կատարել իր հիմնական գործառնությունը՝ հասարակական կարգի, պետական և քաղաքացիների անձնական գույքի պահպանումը, հանցավորության դեմ պայքարը:

Պատմում է Լեոնիդյանի ներքին գործերի վարչության պետ, միլիցիայի գնդապետ Լ.Փալստյանը.

«Երբ պարզեցինք, որ քանդված են Մոսկովյան և Շիրակի ներքին գործերի բաժինների շենքերը, հայտնաբերեցինք զոհվածներին, սկսեցինք ստուգել օբյեկտները: Հավաքեցինք անօթևան մնացած և ծնողներին կորցրած երեխաներին ու կերակրեցինք: Հենց առաջին գիշերը ձերբակալեցինք մի քանի հանցագործի: Այսպես՝ «Նվերներ» խանութ էին մտել երկու վաճառողուհիներ, որպեսզի վերցնեն իրենց հագուստը, սակայն ձեռքի հետ հավաքել էին նաև հիսուն հազար ռուբլու արժողության ապրանքներ:

Կիրովականի ներքին գործերի բաժնի պետ, միլիցիայի գնդապետ Ա.Հովսեփյան.

«Երկրաշարժից հետո Կիրովականում խուճապ սկսվեց: Մարդիկ փախչում էին փողոց՝ չհասկանալով՝ ինչ է կատարվում: Առաջին ռուպեններին թվում էր, թե պայթել են քիմկոմբինատի տարողությունները: Սակայն միլիցիան այդ բարդ իրավիճակում չչփոքվեց: Վթարներից և հրդեհներից խուսափելու համար առաջին հերթին անջատեցինք հոսանքը, գազը, ջուրը: Աշխատողների մի մասը բարձրախոսներով պատվում էր քաղաքում և կոչ անում քաղաքացիներին պահպանել հանդարտություն: Մեկ ու կես ժամ հետո խուճապը հարաբերականորեն հանդարտվեց, սկսվեց տարերային աղետի հետևանքների դեմ պայքարում բնակիչների

համախմբումը:

Առաջին ժամերի ընթացքում կնքվեցին և ապահով տեղ փոխադրվեցին խնայքանկերում և ոսկերչական խանութներում պահպանվող բոլոր գումարներն ու արժեքները: Կարևորագույն օբյեկտներում տեղադրվեցին պահակետեր: Խիստ հսկողության տակ վերցվեց փողոցային երթևեկությունը: Հենց այդ համակարգված աշխատանքն օգնեց խուսափել շատ աղետներից»:

Սպիտակի ներքին գործերի բաժնի պետի պաշտոնակատար, միլիցիայի փոխգնդապետ Վ.Բոգոմազով.

«Երբ ես ընդունեցի բաժնի ժամանակավոր ղեկավարումը, բաժնի պետին կոտրված ոտքերով հանել էին փլատակների տակից երկրաշարժից միայն 16 ժամ հետո: Իրավիճակը ծայրահեղ բարդ էր. բաժնի հինգ ծառայող զոհվել էր, տասնչորսն ստացել էր ծանր վնասվածքներ, 34-ի հարազատներն էին զոհվել, շատերը մնացել էին անօթևան: Այդ իրավիճակում ներքին գործերի մարմինների աշխատակիցները, հաղթահարելով իրենց վիշտը, անձնուրաց մվիրունով կատարում էին սրբազան պարտքը ժողովրդի հանդեպ: Նրանց սատարում ու վշտակցում էին նախկին ՀԽՍՀ ՆԳՆ մարմինների, ստորաբաժանումների, բարեկամ հանրապետությունների ներքին գործերի մարմինների՝ օգնության եկած ծառայողները, ներքին գործերի զինվորները, նախկին ԽՍՀՄ ՆԳՆ ուսումնական հաստատությունների սովորողները»:

Երկրաշարժից շատ չանցած՝ սկսվեցին աղետի գոտու վերականգնման աշխատանքները: Թեև դանդաղ, բայց կառուցվում էին: Իսկ կվերականգնվե՞ն արդյոք մարդկանց հույսը, վստահությունը և լավատեսությունը:

Հեղափոխությունից հետո շատ բան է փոխվել: Համոզված ենք, որ այսուհետ ամեն ինչ արվելու է, որ մոռացվի աղետի գոտի հասկացությունը: Վստահ ենք, որ ազգովի այսօր քայլում ենք Հայաստանը դրախտի երկիր դարձնելու ճանապարհով:

Ամեն ինչ շատ լավ է լինելու:

Եկեք այսօր Գյումրու, Վանաձորի, Սպիտակի հերոսական ժողովրդին, հայ ժողովրդին և առհասարակ աշխարհի բոլոր ժողովուրդներին ցանկանամք խաղաղ, անմապ երկինք, սեր ու բարեկամության անխաթար դաշինք, որ ապրեն ոչ թե քանդելու, այլ արարելու առաքելությամբ:

Դավիթ Հովսեփյան
ՀՀ ոստիկանության պատմության
թանգարանի
առաջատար մասնագետ,
պաշտոնաթող գնդապետ

ՄԵԶ ԲԱՅԱԿԱ ԶՂՆԵՔ ԱՆԿԱՏԱՐ ԵՐԱԶԱՆՔՆԵՐ

Նաիրի Արարատի Տոնյանը ծնվել է 1963թ. Վրաստանում (Թիֆլիս), ծառայողի ընտանիքում: 1966 թվականին Տոնյանի ընտանիքը մշտական բնակություն հաստատելու համար տեղափոխվել է Երևան: 1979թ. ավարտել է Երևանի թիվ 138 միջնակարգ դպրոցը, իսկ 1980թ.՝ թիվ 11 պրոֆտեխնիկական ուսումնարանը, որտեղից էլ գործուղվել է աշխատելու ՆԳՄ պահպանության վարչությունում: 1981-1983թթ. ծառայել է խորհրդային բանակի օդադեսանտային գործերում և եղել հատուկ նշանակության ջոկատների բաժանմունքի պետ, առաջին կարգի հետախույզ:

27-ամյա երիտասարդը լի էր կյանքով ու երազանքներով: Պատանեկան տարիքից սկսած՝ սիրում էր լեռներ բարձրանալ, բարձունքներ գրավել, և պատահական չէր, որ առաջին կարգի լեռնագնաց էր համարվում: Աշխատանքային ընկերները նրան հիշում են որպես կենսուրախ, հումորի մեծ զգացումով երիտասարդ: Նա ջերմորեն սիրում էր ծնողներին, կնոջը, մի քանի անսակական աղջկան: Գործընկերների խոսքում մեծ հարգանք կար, խոր ավստսանք, անթաքույց ցավ:

Մարզված ու հաղթանդամ երիտասարդը զինվորական ծառայությունը պատվով կատարելուց հետո կայացնում է վճռական որոշում՝ շարունակել ծառայությունը միլիցիայում: Երեք տարի անթերի ծառայելուց հետո ՆԳ նախարարությունը Նաիրի Տոնյանին կատարելագործվելու և մասնագիտանալու համար գործուղում է Վիլնյուսի միլիցիայի դպրոց: Դպրոցն ավարտում է գերազանցությամբ դիպլոմով և ստանում իրավաբանի որակավորում: Վերադառնալով Հայաստան՝ շարունակում է ծառայությունը Արաբկիրի շրջանի ներքին գործերի բաժնում որպես տեղամասային տեսուչ, ապա՝ քրեական հետախույզության օպերիվադոր:

Թեև նա երդվել էր իր կյանքն ի սպաս դնել հանուն հայրենիքի, սակայն չգիտեր, որ կյանքի թելն այդքան շուտ կկտրվեր հասարակության չարիք հանցագործների ձեռքով՝ անկատար թողնելով իր վեհ նպատակներն ու երազանքները:

1990թ. հոկտեմբերի 14-ին՝ ծառայողական պարտականությունները կատարելիս, հանցագործների գնդակից զոհվեց միլիցիայի 27-ամյա լեյտենանտ Նաիրի Արարատի Տոնյանը: Չարաբաստիկ գնդակը խել էր մի երիտասարդի կյանք, որը համոզված էր, որ միլիցիայում աշխատելով՝ կարող է ծառայել հայրենիքի բարօրությանը:

Այդ օրը Արաբկիրի բաժնում շատ ահազանգեր էին եղել: «Պրահա» հյուրանոցից կանչված օպերատիվ խումբը, հանձնարարական ստանալով, Քոչարի փողոցով սլանում է դեպքի վայր: Ծառայողական մեքենա-



յուն էին Արաբկիրի շրջանի օպերիվադոր, կապիտան Սուրեն Մարգարյանը, լեյտենանտ Նաիրի Տոնյանը, ԱՏԳ-ի տեսուչ Արթուր Ջանոյանը և վարորդը՝ սերժանտ Արմեն Պողոսյանը: Հասնելով Գայդարի փողոց՝ մեքենան դանդաղեցնում է ընթացքը և աստիճանաբար կանգ առնում: Արթուրը, ինքնաձիգը ձեռքին, իջնում է մեքենայից: Հենց այդ պահին լսվում է կրակոց: Արթուրը հասցնում է թաքնվել: Արձակած մի քանի գնդակից վիրավորվում են մեքենայի հետնամասում նստած կապիտան Սուրեն Մարգարյանը և առջևում նստած Նաիրին, իսկ ոճրագործները դիմում են փախուստի: Արմենն ու Արթուրն օգնության են կանչում հարակից շենքի բնակիչներին ու, չսպասելով չտապօգնության մեքենային, վիրավորներին տեղափոխում են հիվանդանոց: Նաիրին շատ էր արյուն կորցրել. անհնար է լինում փրկել նրա կյանքը: Վիրահատության սեղանին չհասած՝ դեռ միջանցքում նա մահանում է, սակայն Սուրենի կյանքը կարողանում են փրկել:

Դեպքից յոթ ամիս անց հաջողվում է գտնել ոճրագործին, որը դատապարտվում է 11 տարի ազատազրկման:

Նաիրի Տոնյանը ինն անգամ խրախուսանքի է արժանացել ծառայողական պարտականությունները պատշաճ կատարելու, բանմագիտական բարձր պատրաստվածության և գործին նվիրված լինելու համար:

2011թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ ոստիկանության պետի հրամանով Նաիրի Տոնյանը հետմահու պարգևատրվել է «Մխրագործության համար» մեդալով:

Տարիներ են անցել, սակայն նա շարունակում է վայելել իր գործընկերների սերն ու համակրանքը:

Նրա դուստրը՝ Անժելան, որն անգամ չի հիշում հորը, գեների կանչով ընտրել է վաղամեռիկ հոր բարդ և պատասխանատու մասնագիտությունը:

Տիգրան Խաչատրյան
Կրթության որակի
ապահովման
բաժանմունքի պետ,
ոստիկանության
ավագ լեյտենանտ

ՊԱՏՎԱԲԵՐ ՀԱՂԹԱՆԱԿ

Ժյուրին ամփոփեց Ֆրանսերեն դասավանդողների միջազգային ֆեդերացիայի 50-ամյակին նվիրված լուսանկարների մրցույթի արդյունքները: Մրցույթը կրում էր «Ֆրանսերեն սովորելը նաև հաճելի է» խորագիրը, որը հայտարարված էր աշխարհի բոլոր ֆրանսերեն դասավանդողների համար, և լավագույն 12 լուսանկարները պետք է պատկերվեին հորեյանական օրացույցում: Ի պատիվ և հուրախություն մեր երկրի, Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայկական Ալիանս Ֆրանսեզի և Հայաստանի ֆրանսերեն դասավանդողների միության՝ ոստիկանության կրթահամալիրի լեզուների ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Անի Հայրապետյանի ուղարկած լուսանկարը ժյուրիի կողմից ճանաչվել է 12 հաղթող լուսանկարներից մեկը և հայտնվել է հորեյանական օրացույցում:

Շնորհավորում ենք պատվաբեր հաղթանակի համար:



«J'aime beaucoup la langue, la civilisation et la culture françaises. J'aime enseigner à des policiers. Ceux-ci doivent aider les touristes francophones dans toutes les situations.»

Ani HAYRAPETIAN, Arménie



ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՐՄԱՑԱՆԸ

Այս սուրբ պատերի ներքո՝ Սրբատաշ հատակի վրա, Կարգով չոքել են մանկիք՝ Աչքերը գրակալի վրա:

Սերմեր է ցանել գիտության Որպես մի ազնիվ սերմնացան, Վարդապետը երկրից հայոց՝ Այր մի՛ անունով Մաշտոց:

Այբ, բեն, գիմ, դա, եչ, զա. Արարչի խոսքերին անսա՛, են, ըթ, թո, ժե, ինի. Աստու կամքը թող լինի:

Անցնելով գավառից գավառ՝ Հասել է արծվաբուն Արցախ, Ու չքնաղ այս վանքում Ամարաս Գրերն են հնչել երկնահաս:



Ռոզա Մուսայելյան
Լեզուների ամբիոնի դոցենտ,
ոստիկանության գնդապետ

ԵՐԳ ԿԱՐՈՏԻ

Ուզում եմ՝ լինես միայն իմ կողքին, Քեզնով ջերմացնեմ իմ սառը հոգին, Ուզում եմ՝ զարման երկնքի պես ջինջ Անունդ դաջվի իմ տոչոր սրտին: Արբել եմ ուզում քո քաղցր բույրից Ու դանդաղ հալվել քո տաք համբույրից, Ուզում եմ սիրտս լոկ քեզ նվիրել, Քեզանով տարվել, քեզանով գերվել, Անգամ զույգ աչքս նվիրաբերել, Որ այդ աչքերով փորձես ինձ նայել. Գուցե հասկանաս ու բացահայտես, Թե որքան եմ ես ուժգին կարոտից Գիշերներն անքուն լռիկ արտասվել: Հրաշքով հայտնվել եմ ուզում քո կողքին, Հավերժ ու ցմահ դառնալ քո գերին, Եվ կյանքը դաժան ինչքան էլ փորձի, Մնամ քո սրտի միակ տիրուհին:



Լիանա Հարությունյան
Ոստիկանական միջին մասնագիտական կրթության
Ֆակուլտետի առաջին կուրսի ոստիկան,
ոստիկանության կրտսեր սերժանտ

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՏՈՆՈՒՄ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Սկիզբը՝ էջ 2

Իտալացիներն ասում են, որ եթե ընկերների համար ոչ մի նվեր չես պատրաստել, պետք է նրանց նվիրել ջուր և ծիծեռնու ծյուղ. դրանք երջանկություն կբերեն:

Իտալացիները կարևորում են նաև, թե ում առաջինը կհանդիպեն Նոր տարուն: Հոգևորական կամ երեխա տեսնելը ցանկալի չէ, իսկ ահա ծեր, կորացած մեջքով պապիկի հանդիպելը համարվում է հաջողության նշան:

Նոր տարին Գերմանիայում աղմկոտ և զգացմունքներով լի տոն է: Գերմանացի փոքրիկներն սպասում են Սանտա Նիկոլաուսին, որը, փոքրիկ ավանակին նստած, շրջում է բոլոր քաղաքներում ու նվերներ տալիս երեխաներին:

Գերմանիայում, երբ սկսում են խփել 12:00-ի զանգերը, բարձրանում են աթոռների և բազմոցների վրա ու վերջին զանգի հետ ցատկում «նոր տարվա» մեջ, տիրում է բուռն ուրախություն ու ծիծաղ, և սկսում են շնորհավորել միմյանց:

Անգլիայում Ամանորի կեսգիշերին անգլիացիները բացում են տան հետին դուռը և ճանապարհում հին տարին, իսկ զանգերի վերջին դողանքի հետ Նոր տարին բերում են տուն՝ արդեն դիմացի դռնով:

Եթե 12-րդ դղանքից հետո մուգ մազերով երիտասարդ մարդ է տուն մտնում (առաջին հյուր), ապա եկող տարին հաջողակ կլինի: Առաջին հյուրը պետք է հաց, ածուխ և մի պտղունց աղ բերի: Դրանից հետո նա այրում է ածուխը բուխարիում, բոլորը միմյանց շնորհավորում են, իսկ հաջողություն բերող հյուրին անպայման հյուրասիրում են:

Երեխաները քնելուց առաջ Սանտա Կլաուսի նվերների համար ափսե են դնում, իսկ կոշիկի մեջ՝ խոտ նրա ավանակի համար:

Մեծ Բրիտանիայում ընդունված է տոների կապակցությամբ բացիկներ նվիրել: Ի դեպ, հենց Անգլիայում է ծնվել բացիկներ փոխանակելու ավանդույթը: Ամանորյա առաջին բացիկը տպագրվել է Լոնդոնում 1843 թվականին:

Ֆրանսիայում Ձմեռ պապը կամ, ինչպես իրենք են անվանում, Պեռ Նոելը, նոր տարվա գիշերը հյուր է գալիս երեխաներին և նվերներ է թողնում նրանց կոշիկներում:

Ամանորյա թխվածքի մեջ այնտեղ ընդունված է տեղադրել լոբու հատիկ: Նա, ով իր թխվածքի մեջ գտնում է այդ լոբու հատիկը, ստանում է «լոբու արքա» անվանումը: Ամանորի գիշերը բոլորը



պետք է կատարեն նրա հրամաններն ու ցանկությունները:

Ֆրանսիայում մարդիկ կարող են նվիրել միմյանց ամեն ինչ, չնայած օծանելիք կարող է նվիրել միայն ամուսինն իր կնոջը: Այլ տղամարդուց մանատիպ նվերը «կանոններից դուրս» է:

Ճապոնիայում Ամանորը դիմավորում են զանգերի 108 հարվածներից հետո: Ըստ ավանդույթի՝ այդ հարվածներից յուրաքանչյուրը ոչնչացնում է մարդկային թերություններից մեկը:

Նոր տարվա առաջին րոպեներին ճապոնացիները ծիծաղում են, ինչը, ըստ նրանց, հաջող տարվա գրավականն է: Տունը զարդարում են բամբուկներով, քանի որ բամբուկը հավերժություն և հավատարմության խորհրդանշ է:

Վաղ առավոտյան ճապոնացիները դուրս են գալիս տներից, որպեսզի դիմավորեն լուսաբացը: Նոր տարվա արեգակի առաջին շողերի ներքո նրանք շնորհավորում են միմյանց և նվերներ տալիս:

Չինաստանում Նոր տարին լապտերների տոն է: Այն նշվում է լուսնային օրացույցի տասնհինգերորդ օրը: Նոր տարվա գիշերը փողոցներում մարդիկ շատ լապտերներ են վառում, որպեսզի լուսավորեն իրենց ճանապարհը դեպի նոր տարի, քանզի նրանք կարծում են, թե նոր տարին շրջապատված է չար ոգիներով և անմաքուր ուժերով, որոնց վախեցնում են հրավառության միջոցով:

Ամանորին չինացիները տունը զարդարում են դեղձենու կամ ծիրանենու ծաղկած ծյուղերով և մանդարինի ծառերով, որոնց վրա կախված են նարնջագույն պտուղներ, սեղանին դնում են ձմերուկ, որի կարմիր և քաղցր միջուկը հաջողություն է խորհրդանշում գալիք տարում: Երեկոյան՝ նախքան Նոր տարվա գալը, տեղի է ունենում վիշապի պարի մասսայական ցուցադրություն: Պարում են բոլորը՝ անկախ իրենց սոցիալական վիճակից, հարուստ կամ աղքատ լինելուց: Առավել ուրախ երեքերն ու վառ հանդիպումները տեղի են ունենում գիշերը, երբ փողոցներում ու այգիներում

րում խառուկներ են վառում:

Ամանորը Հայաստանում ամենասիրելի տոներից մեկն է: Այն նշվում է դեկտեմբերի 31-ի գիշերը: Այս գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ հոգեթրով լի տոնն իր հետ բերում է խինդ և ուրախություն:

Հայերն Ամանորին պատրաստվում են դեռ շաբաթներ առաջ՝ զննումներ կատարելով և նախապատրաստվելով այդ շատ կարևոր օրվան: Բոլորն էլ իրենց հերթին ցանկանում են գեղեցիկ ու ճոխ սեղաններ ունենալ՝ համեմված հայկական խոհանոցի ավանդական ուտեստներով, որոնք բնորոշ են հատկապես Ամանորին: Հայկական ավանդական տոլման և զաթան յուրաքանչյուր սեղանի զարդն են: Անկախ սոցիալական վիճակից՝ ամուսն են ամենաբարձր, որ Նոր տարվա սեղանը լինի առատ՝ առաջնորդվելով «Ինչպես դիմավորես Նոր տարին, այնպես էլ կանցնի ամբողջ տարին» ասույթով: Սեղանին պետք է անպայման լինեն առատություն խորհրդանշող աղանձը՝ կանեփով ու քունջութով, պատուց տոլման՝ զանազան ընդդեմներով, փշատը:

Ամանորին մարդիկ այցելում են միմյանց, նվերներ փոխանակում: Այս տոնին հատկապես փոքրիկներն են անհամբերությամբ սպասում: Նրանք հավատում են Ձմեռ պապի գոյությանը և դեռ շաբաթներ առաջ նրան նամակ են գրում՝ ցանկանալով նվեր ստանալ այս կամ այն խաղալիքը:

Այդ օրերին երևանը երջանկությամբ ողողված նորահարսի է նմանվում, իսկ նրա սրտում՝ Հանրապետության հրապարակում, տոնական լույսերով ու փայլերով զարդարված, վեր խոյացած հսկա տոնածառն է իր շուրջ համախմբում փոքրիկներին: Նրանց տոնական տրամադրությունը բազմապատկում են Ձմեռ պապն ու Չյունանուշը:

Այս տարի ևս պատմության մի էջ կթերթվի, ևս մեկ տարի կմնա անցյալում՝ թողնելով հաջողություններն ու անհաջողությունները, ուրախ ու տխուր պահերը, որ եղել են 2018 թվականին: 2019 թվականն իր հետ կբերի նոր սպասումներ, նոր հույսեր ու երազանքներ: Եկեք բազում փորձությունների միջով անցած մեր ժողովրդին ցանկանալով խաղաղ երկինք, արգասաբեր տարի, իսկ մանուկներին՝ առողջություն, անհոգ ու երջանիկ մանկություն:

Լիլիթ Ոսկանյան
Կրթության որակի ապահովման
բաժանմունքի
առաջատար մասնագետ

Հմանորյա կառակներ

– Ինչո՞վ է տարբերվում Ձմեռ Պապը Սանտա Կլաուսից:
– Ձմեռ պապը գալիս է Չյունանուշի հետ, Սանտա Կլաուսը՝ եղջերուի:

Նոր տարուց հետո հանդիպում են երկու ընկեր.

– Հը, ո՞նց դիմավորեցիր Նոր տարին:
– Դե, վատ չէր, իսկ դու՞:
– Չգիտեմ, դեռ չեմ պատմել:

– Ահա թե դու ինչպիսին ես, երրորդ հազարամյակի մարդ,- ասաց տղամարդը՝ հունվարի 1-ին հայելու մեջ նայելով իր ուռած դեմքին և կարմրած աչքերին:

Դեկտեմբերի 30-ից Հայաստանում մեկնարկել է «ձեռք չտաս, Նոր տարվա համար է» սեզոնը:

– Ո՞րն է միայնակությունը՝ բառիս բուն իմաստով.
– Երբ Նոր տարուն քեզ շնորհավորում է միայն նախագահը հեռուստացույցով:

Հունվարի 1-ին ոստիկանը մի մեքենա է կանգնեցնում: Մի կերպ դուրս է գալիս հարբած վարորդը և ասում.

– Պատկերացնու՞մ ես, շեֆ, գիշերը երեքով չորս շիշ օդի խմեցինք, վրայից էլ՝ մի արկղ զարեջուր: Ոստիկանը.

– Ի՞նչ, մի հատ հո՞ արա:
– Շեֆ, ուրեմն դու ինձ չե՞ս հավատում:

Ձրուցում են երկու ընկերուհի.

– Ի՞նչ հագնեմ Ամանորին, որ բոլոր տղամարդիկ ինձ նայեն:
– Վզիցդ կուլունի փոխարեն մի շիշ օդի կախիր...

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

ԴԱԺԱՆ ՕՐԵՆԵՆ ՈՒ ԽԵԼՈՔ ԳՅՈՒՂԱՅԻՆ

Մի ժամանակ ապրում էր մի դաժան կառավարիչ, որը չէր ցանկանում, որ որևէ մեկը մոտենար իր տիրապետության սահմաններին: Նա իր տիրապետության սահմանափակի հորդառատ գետի կամրջի մոտ ժամապահ էր կարգել, որը, կատարելով իր տիրոջ հրամանը, հարցնում էր ամեն մի ճանապարհորդի.

– Ինչո՞ւ ես գնում այս ճանապարհով:

Եթե ճանապարհորդը ճիշտ պատասխան չէր տալիս, ժամապահը պարտավոր էր բռնել նրան և տեղնուտեղը կախել մոտակա ծառից, իսկ եթե ճանապարհորդը ճիշտ պատասխան էր տալիս, ժամապահը պետք է նրան անմիջապես նետեր հորդառատ գետը, ուր կխեղդվեր անմեղ անցորդը:

Բոլորը գիտեին այդ դաժան օրենքի մասին, և այդ պատճառով ոչ ոք չէր համարձակվում մոտենալ դաժան կառավարչի տիրապետության սահմաններին:

Բայց ահա մի օր գտնվեց մի գյուղացի, որ հանգիստ մոտեցավ վտանգավոր կամրջին, ուզում էր անցնել ժամապահի մոտով, երբ վերջինս բռնվեց.

– Ինչո՞ւ ես գնում այս ճանապարհով,- և կանգնեցրեց գյուղացուն՝ պատրաստ մահապատժի ենթարկելու նրան:

Գյուղացին ժպտաց և պատասխանեց, սակայն պատասխանն այնպես եղավ, որ ժամապահը շփոթվեց և չկարողացավ դաժան օրենքի համաձայն գյուղացուն ո՛չ կախել, ո՛չ էլ ջրահեղձ անել:

Կռահե՛ք, թե ինչ պատասխան տվեց այդ համարձակ ու խելացի գյուղացին:

Այդ գյուղացու պատասխանից հետո դաժան կառավարիչը ստիպված էր վերացնել իր իսկ սահմանած սարսափելի օրենքը:

Պատասխանը

:միջցված ցոթոտ նրա ճգնճոմգի դժո՛ճ ցնց ձնա ղմով
Հս ցվճոտսի իվվմսց՝ ցոթսմոտով ձսվտ ոմց դ վիտուկ,
:Ղգվտի մչ ցոթիմոց

-ոմկ ցւմճոց սւնցմով իով 'ճցմով ցվոտսիւմ մս 'մզիոցոմշի 'լցոցո նսմոկ մչ? ող տն ճոմ 'լցոցո ցնցվոմճ լոմ 'լզվոկի զճ Հս մչ ցոթիմոցոմկ ցւմճոց սւնցոտ տնվչ իով 'ճոոոտ տնվչ ցվճոտսիւմ մս 'մչ ցւսիճոտո ցւմճոց նիղ :մչվոկի 'մցոցո Հցււ :ցվիոյոտի ճցմճցւմիշ մցոլոոտոտի վոկոոնղ :«ճվցոտոմով ում ճոցվ ցզվոկի ցջվ մս 'ցզ ցւցեղ ոչ» :ճցոլոոտոտի ցվճոտսիւմ